

## ВОПРОСЫ ИСТОРИИ НАХИЧЕВАНСКОГО КРАЯ В 14-17 ВЕКАХ

*А. А. Карагезян*

В статье представлены социально-экономическая и политическая история, демографическая ситуация, культурные центры и памятники армянской архитектуры Нахичеванского края исторической Армении.

## THE QUESTIONS OF THE HISTORY OF THE NAKHICHEVAN REGION IN THE 14-17 CENTURIES

*A. H. Gharagyozyan*

In the article are represented the social-economic and political history, demographic situation, the cultural centers and monuments of the Armenian architecture of the Nakhichevan edge of historical Armenia.

## ՀՈՎՍԵՓ ԷՄԻՆ. ԱԶԳԱՅԻՆ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ԲՈՒՐԺՈՒԱԴԵՍՈՎՐԱՏԱԿԱՆ ԳԱՂԱՓԱՐԱԸՆԿԱԼՄԱՆ ՍԱՂՄԵՐԸ ՀԱՅՈՑ ՄԻՋԱՎԱՅՐՈՒՄ

**Ա. Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ**

*Պատմական գիտությունների թեկնածու,  
Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի դասախոս*

Թուրքիայի և Պարսկաստանի՝ Առաջավոր Ասիայի ստրատեգիական դիրքերին, անդրկովկասյան հաղորդակցության ուղիներին ու առևտրային հանգույցներին տիրանալու ձգտումների արդյունքում Հայկական լեռնաշխարհի երբեմնի մարդաշատ բնակավայրերը XVI դարի սկզբներից վերածվեցին մարտադաշտի: Երկուս ու կես դար տևող պատերազմական գործողությունների ընթացքում հիշյալ տարածքն ամբողջությամբ ավերվեց, բնակչության գերակշռող մասը ոչնչացվեց, իսկ մի զգալի մասը՝ արտագաղթեց ճնշումներից ու ջարդերից ազատվելու նպատակով [2, 72-78; 8, 603-615; 3, 7-18]:

Թուրքական և պարսկական տիրապետության օրոք հայ ժողովուրդը գոյատևում էր ստորացուցիչ պայմաններում՝ մշտապես որոնելով փրկության ուղիներ այդ դժժան լծից ազատագրվելու համար: Սոցիալ-տնտեսական և քաղաքական զարգացումների, առաջադիմական ուժերի ու գաղափարախոսությունների ի հայտ գալու հետ կապված՝ հայոց ազատագրական շարժումը մերթ վերելք էր ապրում, մերթ՝ անկում: Այն նոր վերելք ապրեց XVIII դարի երկրորդ կեսին՝ պայմանավորված հայ բուրժուազիայի ձևավորմամբ: Այս փուլում ազատագրական շարժման կենտրոններ դարձան հայ գաղթօջախները [7, 773-774; 8,

696-697; 12, 128-129]: Ի տարբերություն թուրքական և պարսկական պետությունների ավատատիրական մասնատվածությանն ու հետամնաց կարգերի, որոնք մեծապես արգելակում էին տնտեսական և հասարակական քաղաքական զարգացմանը, շատ այլ երկրներում բուրժուական հարաբերություններն աննախադեպ վերելք էին ապրում: Այդ պետություններում հաստատված հայ բնակչության վերնախավն ակտիվորեն ընդգրկված էր զարգացման հիշյալ գործընթացում և կյանքի բոլոր բնագավառներում առաջընթաց էր ապրում: Այնուամենայնիվ, հայ գաղթօջախների բնակչությունը շատ շուտով զգաց ազգային պետություն ու իշխանություն ունենալու պակասը, քանզի նա իր շատ ձգտումներն օտար երկրներում չէր կարող իրականացնել: Այդ երկրներում ևս առկա էին խտրականությունը, տնտեսական ու քաղաքական ճնշումները, որոնք հայ բնակչությանը ստիպում էին մտածել հայրենիքն ազատագրելու, սեփական պետություն և իշխանություն ստեղծելու մասին [8, 696-697; 12, 129; 3, 24-29]: Ձարգացող առևտրական բուրժուազիային անհրաժեշտ էր ազգային ուժեղ պետություն և պետական հովանավորություն՝ սեփական պահանջները բավարարելու համար: Ահա այսպիսի տնտեսական և քաղաքական պայմանների թելադրանքով օտար երկրներում հանգրվանած հայ առևտրային բուրժուազիան պարտադրված ձեռնամուխ եղավ հայ ժողովրդին թուրքական և պարսկական տիրապետությունից ազատագրելու և հայոց պետականությունը վերականգնելու գործին: Այդ գործընթացում XVIII դարի երկրորդ կեսերին աչքի ընկան հատկապես հնդկահայ գաղթօջախները՝ ձևավորելով հայ ազատագրական շարժման և հասարակական - քաղաքական մտքի նոր, առավել առաջադիմական՝ բուրժուադեմոկրատական փուլ [9, 41; 3, 26-33, 12, 128-129; 8, 697]:

Այս ժամանակաշրջանի փայլուն ներկայացուցիչներից է Յովսեփ Էմինը (Էմին Յովսեփի Էմինյանը, 1726-1809 թթ.): Դեռևս պատանեկության հասակում նա տարվում է ազատագրական գաղափարներով և որոշում է յուրացնել եվրոպացիների կառավարման, ռազմարվեստի կազմակերպման ձևերն ու ի սպաս դնել հայրենիքի ազատագրման գործին [10, 72, 111; 11, 270; 8, 698, 12, 129-130; 7, 774-775; 2-85]:

Մինչ Յովսեփ Էմինի գործունեության ծավալումը, հայ իրականությունում տիրում էր օտար ուժերի օգնությամբ ազատագրվելու և ազգային պետություն ստեղծելու ելակետային մոտեցումը: Եթե մինչ XVII դարի վերջերին այդ դերակատարումը վերագրվում էր Յոզմի կաթոլիկ եկեղեցուն և եվրոպական պետություններին, ապա XVII դարի վերջից՝ Ռուսաստանին:

Չայ պատմագիտության մեջ Յովսեփ Էմինին ոմանք համարում են հայ ժողովրդի ազատագրման «եվրոպական» [13, 78-79], ոմանք՝ «ռուսական» [2, 86; 5, 375; 8, 697; 3, 43-44; 12, 129-132] կողմնորոշման ներկայացուցիչ, իսկ Ս. Ս. Թելունցը նրան վերագրում է սեփական ուժերով ազատագրվելու սկզբունքի գաղափարակիր՝ «ինքնուրույն կողմնորոշման» նախակարապետ [6, 9-65]: Առաջին տեսակետի համար հիմք է ծառայել Էմինի՝ հայերի ազատագրման հարցում Անգլիայի դիրքորոշումը պարզելու նպատակով վարչապետ Պիտտի հետ հանդիպման, ինչպես նաև ռազմական փորձառություն ձեռքբերելու նպատակով անգլո-ֆրանսիական պատերազմին մասնակցելու փաստերը: Երկրորդ տեսակետի կողմնակիցները հիմնվում են Էմինի կողմից Վրաստան գնալու և Յերակլ II

թագավորին ներկայանալու նպատակով Ռուսաստանի պետական գործիչների միջնորդությանը դիմելու հանգամանքը: Երրորդ կարծիքը խարսխված է Էմինի քաղաքական և պետաիրավական հայացքների վրա:

Յուզսեփ Էմինի ինքնակենսագրական նյութերի ուսումնասիրությունից պարզ երևում է, որ նա խիստ ինքնուրույն հայացքների տեր, սեփական ուժերին ապավինող և չափազանց իրատեսական անձնավորություն է եղել, ինչպես դա նկատել է Լեոն [7, 774]: Յետևաբար այս տեսանկյունից էլ պետք է դիտարկել նրա հասարակական-քաղաքական գործունեությունը՝ ազգային ազատագրական գործընթացի վերաբերյալ նրա մոտեցումներն ու արտաքին ուժերի նկատմամբ ունեցած կողմնորոշումը ճիշտ գնահատելու համար:

Այս առումով տեսականորեն նրա կողմնորոշումը միանշանակ հակվածություն չէր կարող ունենալ, քանի որ քաղաքական իրավիճակի փոփոխման հետ կապված՝ Էմինն այն կարող էր փոխել: Ահա թե ինչու է ուսումնասիրողների մոտ տարբեր կողմնորոշում ունեցող գործչի տպավորություն թողել: Այդ պատճառով նրա գործունեությունը կարելի է համարել փուլային:

Ազգային ազատագրական գործընթացում արտաքին ուժերի նկատմամբ Էմինի ունեցած կողմնորոշումից անկախ՝ միանշանակ կարելի է փաստել, որ նա այդ գործում առաջին հերթին հենվում էր սեփական ուժերի վրա: Ըստ նրա հայացքների՝ մարդկանց ամեն ինչ տրված է հավասար՝ թե՛ ազատություն և թե՛ այն պաշտպանելու միջոցներ [10, 193]: Դրանից հետևում է, որ յուրաքանչյուրն իր անկախությունը սեփական ուժերով և պայքարով պետք է նվաճի: Էմինի այս մոտեցումով էլ պայմանավորված է նրա վերաբերյալ Թելունցի արտահայտած տեսակետը: Սակայն մոտեցումը մնում է մոտեցում, իսկ կողմնորոշումը՝ կողմնորոշում, քանի որ Յուզսեփ Էմինը ազատագրական գործընթացի հաջողության գրավականը համարում էր հայ ժողովրդի զինված պայքարը և միաժամանակ ակնկալում էր նաև արտաքին ուժի հետ համագործակցություն: Այդ հարցում, պարզապես իրատես լինելով, նա հիմնվում էր առավել հավանական ուժի վրա, որը, քաղաքական զարգացումների հետ կապված, կարող էր և փոխվել:

Իր գործունեության առաջին փուլում՝ 1750-70-ական թվականներին, Էմինը փորձում էր հայ ժողովրդի ազատագրման հարցում հենվել Վրաստանի օժանդակության և համագործակցության վրա: Գործունեության այս փուլում Էմինի «Եվրոպական» և «ռուսական» կողմնորոշումը իրականությանը չի համապատասխանում:

Էմինի գործունեության մեջ առհասարակ «Եվրոպական» կողմնորոշում չի զգացվում: Նրա հասարակական-քաղաքական հայացքները Եվրոպական, ավելի շուտ՝ անգլիական են, սակայն նրա ինքնակենսագրական փաստավավերագրերում խոսք անգամ չկա Եվրոպական որևէ երկրի օգնությանը դիմելու մասին: Բացի այդ, հիշյալ տեսակետն արդարացի չէ թեկուզ և այն պարզ պատճառով, որ նա բազմիցս հրաժարվել է այդ երկրում զինվորական ծառայության մեջ մտնելու առաջարկներից, որն անտրամաբանական է այդ երկրի օգնությունը հայցող գործչի պարագայում: Ինչպես նաև՝ այս փուլում Էմինը հայ ժողովրդի ազատագրման խնդրի լուծման գործում երբեք հակված չի եղել դեպի մեծ պետությունները: Չնայած նա համոզված էր, որ հայ ժողովրդի բախտը մեծապես կախված է հզոր երկրների դիրքորոշումներից, սակայն այդ պետությունների օգնու-

թյանը էմինը դիմելու մտադրություն չի ունեցել, քանզի վերջիններս, նրա իսկ բնութագրմամբ, մեր ժողովրդին օլիմպիական գնդակի նման «ոմն լախտիւ հարկանէ, ոմն ոտիւք աքացէ, իսկ ի վախճան խաղին, առեալ արկանեն ի խորշի մինջ իբրև անարգ և անպիտան իմն, մինչև ցնորոգումն կամ կրկնումն խաղին: Որ կնշանակէ դարձեալ գռգռումն ահարկու և սատակիչ պատերազմին, որ ի մէջ երկուց կամ երից տէրութեանց: Ըստ նախնեաց առակին. «Ի մարտիլին ծին և ջորին, էշն կոխան ոտից արարին» [4, 196]: Միաժամանակ պետք է հիշել, որ էմինը հնդկահայ բուրժուազիայի ներկայացուցիչ էր, իսկ այդ գաղթօջախի հայությունը XVIII դարում անգլիական բուրժուազիայի կողմից դուրս էր մղվել հնդկական շուկայից [8, 697; 3, 24-33], ինչի արդյունքում վերջինիս մոտ ձևավորվեց ազգային պետություն և իշխանություն ունենալու, հետևաբար հայ ժողովրդի ազատագրման գործով զբաղվելու գաղափարը: Ուստի և անտրամաբանական է, որ այդքանից հետո էմինն ակնկալեր այնպիսի մի երկրի օժանդակությունը, որն այդքան հոգսեր էր պատճառել հնդկահայությանը:

Ինչ վերաբերում է «ռուսական» կողմնորոշմանը, ինչպես արդեն նշվեց, էմինի գործունեության առաջին փուլում այն որևէ դրսևորում չի գտել: Նա, ինչպես Անգլիայի պարագայում, մերժում է զինվորական ծառայության մեջ մտնելու ռուսական իշխանության առաջարկները:

Յուզման էմինի գործունեության մեջ «ռուսական» կողմնորոշման դրսևորում կարելի է նկատել միայն 1785 թվականից հետո ընկած ժամանակահատվածում, երբ նա վերջնականապես համոզվում է, որ Վրաստանի Յերակ II թագավորի հետ այլևս հույսեր չի կարելի կապել, իսկ Ռուսաստանն արդեն գործնական քայլեր է ձեռնարկում Անդրկովկասի նվաճման ուղղությամբ: Միայն այս պարագայում է նա հայացքն ուղղում դեպի Ռուսաստան ու չնայած իր պատկառելի տարիքին (66)՝ համաձայնվում է ծառայության մեջ մտնել ռուսական բանակում և սեփական ներդրումն ունենալ թուրքական և պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման գործում [4, 190-195]:

Ինչ վերաբերում է Մ. Մ. Թելունցի տեսակետին, ապա կարծում ենք, որ նա պարզապես գերազնահատել է ազգային ազատագրական շարժման հիմնահարցերում էմինի ունեցած դիրքորոշումը: Վերոհիշյալի արժանահավատության մեջ համոզվելու համար փորձենք ճշտել, թե ինչպե՞ս էր պատկերացնում Յուզման էմինը թուրքական և պարսկական լծից հայ ժողովրդի ազատագրման ու անկախ պետականության կառուցման ուղին: Էմինի գործունեության հետ կապված նյութերը վկայում են, որ նա ազատագրվելու միակ ելքը համարել է հայ ժողովրդի զինված պայքարը: Ըստ նրա գաղափարաընկալման՝ անհրաժեշտ է ժողովրդին բոլոր առումներով նախապատրաստել և զինված պայքարի միջոցով հասնել անկախության, քանի որ մարդիկ ծնվում են ազատ ու հավասար, ունեն արժանապատվության զգացում, պատիվ և չպետք է հանդուրժեն ո՛չ ուրիշին գերի լինելը, ո՛չ էլ կրոնակիցների կողմից բռնությունը: Յետևաբար պետք է «խաչը առնել», դուրս գալ «անհաւատներուն դէմ, կռուելու եւ մեռնելու համար» [10, 125-131, 156-157; 9, 48]: Այսպիսին էր էմինի դիրքորոշումը, ինչը նա քարոզում էր ամենուր:

Այդուհանդերձ էմինը հայ ժողովրդի անկախացումն ու ազատության ձեռքբերումը չէր պատկերացնում առանց տարածաշրջանային ուժերի՝ շահագործվող

ժողովուրդների (վրացիներ, ասորիներ, քուրդ-եզդիներ) հետ համագործակցության: Չնայած ազատագրման գործընթացի կազմակերպման հիմնական նախապայմանը նա համարում էր սեփական ուժերով զինված պայքարը, այդուհանդերձ նա այդ պայքարի հաջողությունը տեսնում էր շահագործվող, եթե ոչ բոլոր, ապա գոնե երկու-երեք հարևան ժողովուրդների համագործակցության, համատեղ պայքարի պարագայում: Նա համոզված էր, որ միայն սեփական ուժերը բավարար չեն անկախության ձեռքբերման համար: Այդ իսկ պատճառով հայերի ազատագրման գործում նա վճռորոշ դեր էր հատկացնում Վրաստանին և Ղարաբաղին՝ հաշվի առնելով նրանց կիսաանկախ և ռազմունակ վիճակն ու մարտական ոգին: Հոլսեփի էմինն ամեն կերպ ձգտում էր համագործակցել Վրաստանի հետ և հայ-վրացական ռազմատնտեսական դաշինքի միջոցով թոթափել թե՛ թուրքական և թե՛ պարսկական լուծն ու ստեղծել հայ - վրացական անկախ պետություն՝ Հերակլ Երկրորդ թագավորի գլխավորությամբ [10, 72, 258-261; 9, 48]:

Անդրկովկասյան շահագործվող ժողովուրդներից որպես դաշնակից նա մասնավորապես առանձնացնում էր վրացիներին՝ հաշվի առնելով նրանց քրիստոնյա, հայկական (Բագրատունի) արմատներով իշխանություն ունենալու, նույն ցավով տառապելու, ինչպես նաև ոչ հզոր՝ գրեթե հավասարազոր լինելու հանգամանքները: Վրացիների ընտրության հարցում, կարծում ենք, Էմինը մեծ նշանակություն պետք է տված լիներ վերջին հանգամանքին, քանի որ նա համոզված էր, որ մեծ պետություններից յուրաքանչյուրն իր շահերն ունի և դրանցից սպասելիքներ չպետք է ունենալ: Բացի այդ, նա նկատի է ունեցել նաև այն հանգամանքը, որ հայ - վրացական անկախ պետականության ստեղծումից հետո գիտությունն ու լուսավորությունը խթանելու, երկրի ներուժն ու բնական պայմաններն արդյունավետ օգտագործելու, տնտեսության և արհեստագործության համապատասխան ճյուղերը զարգացնելու, պատշաճ օրենքներով և արդարացի կառավարելու պարագայում հնարավոր կլինի ունենալ հայ և վրացի ժողովուրդներին բավարարող, եվրոպական պետության չափանիշներին համապատասխանող ուժեղ թագավորություն [10, 192-194, 234-235]: Էմինը մտածում էր, որ իրեն կհաջողվի Հերակլ II թագավորին համոզել կառավարման մեթոդները վերափոխել և նրա գլխավորությամբ ստեղծել նման պետություն: Ահա թե ինչպիսին էին Հոլսեփի էմինի մոտեցումները, որոնք տվյալ ժամանակի համար խիստ առաջադիմական էին և իրատեսական: Հոլսեփի էմինի այս դիրքորոշումն էլ հիմք է հանդիսացել Թելունցի վերոհիշյալ տեսակետի համար: Իհարկե, ընդունելի են Թելունցի փաստարկները, որոնցով նա հիմնավորում է Էմինի կողմից Հայաստանի ազատագրման գործում Վրաստանին վճռորոշ դեր հատկացնելու մոտեցումը: Բայց ընդունելի չէ այն տեսակետը, որ այդքանից հետո նա Էմինին համարում է «ինքնուրույն» և ոչ թե «տարածաշրջանային» ուժերի դաշնությամբ ազատագրվելու կողմնորոշման հիմնադիր: Թելունցի բնորոշմամբ Էմինը «միայն ու միայն սեփական ձեռքերով» ազատագրվելու կողմնորոշման գաղափարակիր էր, մինչդեռ Էմինի գործունեությանը վերաբերող նյութերի գնահատման հարցում հարգարժան ուսումնասիրողը հաշվի չի առել նման կողմնորոշում ունեցող անձը բնութագրող մի շատ կարևոր երևույթի բացակայություն, ինչն էապես փոխում է խնդրի բովանդակությունը: Խոսքը վերաբերում է Էմինի կողմից «սեփական ուժերով զինված պայքար» սկսելու նախաձեռնության ուղղությամբ քայլեր

չիրականացնելուն: Յետևաբար և էմիին չի կարելի համարել նման ռազմավարության կողմնակից: Եթե Յովսեփի էմինը համոզված լիներ, որ ազատությունն ու անկախությունը կարելի է ձեռք բերել «միայն ու միայն սեփական ձեռքերով» [6, 25], ապա ձեռնամուխ կլիներ հայ ժողովուրդի զինված պայքարի նախապատրաստմանն ու սկսելուն, մինչդեռ նա Վրաստանի Յերակլ II թագավորին էր համոզում դա իրականացնել հայ - վրացական ուժերով: Այստեղից հետևում է, որ որքան էլ էմինը սեփական ուժերով ազատագրվելու գաղափարի կողմնակից էր, այնուամենայնիվ նա հայ ժողովուրդի անկախացումն ու ազատության ձեռքբերումը չէր պատկերացնում առանց տարածաշրջանային ուժերի հետ համագործակցության: Իսկ դա առավել քան «տարածաշրջանային» կողմնորոշման արտահայտություն է:

Կարծում ենք՝ տվյալ ժամանակաշրջանում ինչպես հայ իրականությունում, այնպես էլ Յովսեփի էմինի մեջ առկա էր «մեր ազգային անմիութեան» [10, 129] արդյունքում ձևավորված սեփական ուժերի նկատմամբ անվստահության հոգեբանական բարդույթն ու օտարի տիրապետությունից միայն արտաքին ուժերի օգնությամբ ազատագրվելու համոզմունքը: Եվ հոգեբանական նման մթնոլորտում հայ ժողովուրդը, սեփական ուժերը համախմբելու, միավորելու և իր մեջ ազատագրվելու ներուժ գտնելու փոխարեն, փորձում էր անիրատեսական ուղիներով՝ արտաքին ուժերի օգնությամբ լուծել այն խնդիրները, որոնք հենց նրանց կողմից էին հարուցվել կամ հարուցվում: Իհարկե, էմինը դա շատ լավ հասկանում էր և այդ իսկ պատճառով էլ ազատության ու անկախության հարցում նախապատվությունը տալիս էր նախ սեփական ուժերին [10, 193]: Բնական է, որ լինելով զարգացող բուրժուազիայի ներկայացուցիչ և ունենալով առաջադիմական հայացքներ՝ Յովսեփի էմինն այդպես պետք է մտածեր: Սակայն նա չկարողացավ կողմնորոշվել, որ թե՛ Յերակլ II թագավորը, թե՛ Ղարաբաղի մելիքները և թե՛ հայոց կաթողիկոսները ավատատիրական կարգերի ներկայացուցիչներ են, հետևաբար անկախության ձեռքբերման խիստ ցանկության դեպքում անգամ նրանք պետք է վարեին համակերպվողական քարոզչություն ու զգուշավոր քաղաքականություն՝ խոչընդոտելով իր «վտանգավոր» և անկանխատեսելի հետևանքներով գործունեությունը: Դա տրամաբանական է, քանզի նրանք ունեցած թեկուզ և կախյալ իշխանությունը չէին փորձի փոխել անորոշ ապագայի հետ: Ահա թե ինչու չիրականացավ էմինի երազած ու ծրագրած ազատության ձեռքբերման և հայ - վրացական պետության ստեղծման գաղափարը, և դա այն պարագայում, երբ Թուրքիան ու Պարսկաստանը գտնվում էին տնտեսապես թույլ վիճակում, և ազգային ազատագրական գործընթացն սկսելու համար պայմանները խիստ նպաստավոր էին: Յետևաբար ամենևին էլ պատահական չէ, որ ոմանք նրա գործունեության մասին կարող են բացասաբար արտահայտվել [1, Ժբ]:

Այսպիսով, Յովսեփի էմինը կարևոր դերակատարում ունեցավ հայոց ազատագրման գործընթացի և դրա հետագա զարգացման գործում: Դաստիարակվելով անզլիական առաջավոր հասարակական - քաղաքական մտքի ազդեցությամբ՝ նա հայ իրականության մեջ ձևավորեց բուրժուադեմոկրատական, լուսավորչական գաղափարախոսություն: Իր առաջադեմ հայացքներով էմինը հայ ազատագրական շարժման գործընթացում սկզբնավորեց տարածաշրջանային

շահագործվող ժողովուրդների համատեղ պայքարի միջոցով թուրքական և պարսկական լուծը թոթափելու դիրքորոշումը հայ իրականությունում:

#### ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. **Բարխուդարեանց Ս.**, Պատմութիւն Աղուանից, հ. ք, Թիֆլիս, 1907:
2. **Գալոյան Գ. Ա.**, Պատմության քառուղիներում: (Ազատագրված ժողովրդի վերածնունդը), Եր., 1982:
3. **Գրիգորյան Գ. Յ.**, Հայ առաջավոր հասարակական-քաղաքական մտքի պատմությունից, Եր., 1957:
4. **Գրիգորյան Վ.**, Հովսեփ Էմինի և Հովհաննես Արղությանի անտիպ նամակները, ՊԲՀ, N 4, Եր., 1990:
5. **Երիցեանց Ա.**, Հայերի մասնակցությունը Ռուսաստանի՝ Անդրկովկասում արած տիրապետությունների մեջ, «Փորձ», N 1, Թիֆլիս, 1877:
6. **Թելունց Մ. Մ.**, Հայ ազգային ազատագրական շարժումները 18-րդ դարի 2-րդ կեսին և իրավաքաղաքական միտքը, Եր., 1995:
7. **Լեո**, Հայոց պատմություն, հ. III, Եր., 1946:
8. Հայ ժողովրդի պատմություն, սկզբից մինչև XVIII դարի վերջը, խմբ. Ս. Ս. Մելիք-Բախչյան, Եր., 1975:
9. **Ներսիսյան Ս.**, Հովսեփ Էմին, «Տեղեկագիր» հասարակական գիտությունների, N 1 (6), Եր., 1941:
10. Հովսեփ Էմինի կեանքն ու արկածները, Պեյրուք, 1958:
11. **Պալասանեան Ս.**, Հովսեփ Էմին և Էդմոնդ Պրըք, «Մասյաց աղավնի», N 10, Փարիզ, 1856:
12. **Սիմոնյան Հր.**, Հայոց պատմություն, հիմնահարցեր, Եր., 2000:
13. **Иованисян А. Р.**, Овсе́п Эми́н, Е., 1945.

#### ОВСЕП ЭМИН: ВОСПРИЯТИЕ БУРЖУАЗНО-ДЕМОКРАТИЧЕСКИХ ЗАЧАТКОВ В НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОМ ДВИЖЕНИИ В АРМЯНСКОЙ СРЕДЕ

*А. С. Хачатрян*

Работа посвящена анализу армянского национально-освободительного движения.

Армянское национальное движение достигло нового подъема во второй половине XVIII века, что было обусловлено формированием армянской буржуазии. На этом этапе центрами освободительного движения стали те армянские колонии, где буржуазные отношения достигли своего подъема. В этих странах была налицо дискриминация, экономические и политические давления, которые заставляли армянских торговцев думать о сильном национальном государстве и о наличии власти. По велению этих условий осевшая в разных странах армянская торговая буржуазия вынуждена была заняться освобождением Армении от турецкого и персидского ига.

Во второй половине XVIII века в деле образования армянского освободительного движения и общественно-политической мысли на новом - буржуазно-демократическом этапе особо выделялись армяно-индийские колонии. Авангардом этого этапа является Овсе́п Эми́н (1726-1809 гг.), который заложил основу освобождения эксплуатируемых народов, первоначально ориентируясь на сотрудничество региональных сил, в частности, на грузинский народ.

**HOVSEP EMIN: THE GERMS OF THE BOURGEOIS DEMOCRATIC PERCEPTION  
OF THE NATIONAL LIBERATION MOVEMENT IN ARMENIAN ENVIRONMENT**

*S. Khachatryan*

Armenian Liberation movement had a new rise in the second half of the 18th century, connected with the foundation of the Armenian bourgeoisie. On this stage the centers of the liberation movements were focused on the Armenian communities, where the bourgeois relationships were in upsurge. But these countries also experienced discriminations, economic and political pressures, which made the Armenian trade bourgeoisie to consider the foundation of a strong national state and power. Due to these circumstances the Armenian bourgeoisie, settled in other countries, had to liberate Armenia from the Turkish-Persian servility. During this process, in the second half of the 18th century the Armenian- Indian communities were quite active, who formed a new bourgeois democratic phase of the Armenian liberation movement and social and political thinking. The outstanding representative of this period was Hovsep Emin (1726-1809), who founded the initial conception of the liberation through regional means: the cooperation of the exploited nations, mainly Georgians.

**ԱՐՑԱԽՅԱՆ ԳՈՐԳԱԳՈՐԾԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ  
ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ ՀՅՈՒՄԻՍԱՐԵՎԵԼՅԱՆ  
ԱՅՍՐԿՈՎԿԱՍՈՒՄ**

**Ա. Ա. ՊՈՂՈՍՅԱՆ**

*Պատմական գիտությունների թեկնածու,  
Գավառի պետական համալսարանի պատմության ամբիոնի դասախոս*

Թռուցիկ դիտարկումներից անգամ նկատվում է, որ գորգագործական բազմաթիվ կենտրոններում արմատացած գորգերի մի շարք տիպեր ակնհայտորեն նմանվում կամ կրկնում են Արցախյան գորգերին: Արցախյան գորգերի ավանդույթները նկատվում են հայոց մշակութային տարածքում գտնվող գորգագործական կենտրոնների մեծ մասում, սակայն դրանց արտահայտությունների քանակով ու կարևորությամբ առանձնակի հետաքրքրություն են ներկայացնում Շիրվանի, Դերբենտի, Ղարաղաղի, Ուրմիա լճի ավազանի և Փոքր Ասիայի գորգագործական կենտրոնները: Մեր ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք, որ հայոց գորգագործական ավանդույթների ներկայության առումով հատկապես ուշագրավ է հյուսիսարևելյան Այսրկովկասը: Ընդհանրապես հայտնի է, որ հայոց գորգագործական մշակույթի զնահատման ու արևելյան գորգերի համակարգում դրա կարևորման հարցում առաջնային նշանակություն ունի հայոց գորգագործական ավանդույթների տարածման արեալների ու դրանց արտահայտությունների բացահայտումը: Այս հաղորդմամբ մենք փորձում ենք ներկայացնել վերն ասված տարածաշրջանի Շիրվանի, Շաքիի, Ղուբայի ու Դերբենտի գորգագործական կենտրոնների առնչությունները հայոց մշակութային գույր-